ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀՌՈՄՈՒՄ

(հունվար 29 - փետրվար 3)

Սույն թվականի հունվարի 29-ին Վատիկանում իր աշխատանքներն է վերսկսել Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական երկխոսության միջազգային համատեղ հանձնախմբի պաշտոնական չորրորդ ժողովը, որի նախորդ հանդիպումը տեղի էր ունեցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Ժողովի ընթացքում հիմնականում քննարկվում են Եկեղեցու առաքելությանը վերաբերող խնդիրներ:

Հայ Եկեղեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ներկայացնում են Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը և ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը ներկայացնում էին Գերաշնորհ Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը և Գերաշնորհ Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը:

Ժողովն սկսեց հունվարի 29–ին: Առաջին երկու օրերի նիստերին մասնակցում էին միայն Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները, հընթացս որի քննարկվեցին երկխոսության նախապատրաստական աշխատանքները:

Հունվարի 30–ին, ժողովից հետո, Գերաշնորհ Տ. Մեսրոպ և Տ. Խաժակ Սրբազանները, Իտալիո հայոց հոգևոր Հովիվ Տ. Առեն վարդապետ Շահինյանը հանդիպեցին Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Ռուբեն Շուգարյանին և հյուպատոս Գևորգ Պետրոսյանին: Սրբազան Հայրերը, գնահատելով ՀՀ դեսպանի՝ հայ և իտալացի ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված գործունեությունը, նրան փոխանցեցին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու բարեմաղթանքները:

Հունվարի 31–ին երկխոսությունն սկսվեց Արևելյան Ուղղափառ և Կաթոլիկ Եկեղեցիների միջև՝ կարդինալ Վալտեր Կասպերի և Բիշոյ մետրոպոլիտի ատենապետությամբ: Ժողովին ելույթ ունեցավ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը □Առաքելություն, վկայություն, ծառայություն և մարդորսության խնդիրները□ թեմայով:

Նույն օրը, երեկոյան, Սրբազան Հայրերը հանդիպեցին նաև Հռոմում ուսանող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Գեղարդ աբեղա Վահունու, Տ. Մուշեղ աբեղա Բաբայանի և Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանի հետ և Հոգեշնորհ Հայր Սուրբերին փոխանցեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները:

ԴԻՎԱՆ ԻՏԱԼԻՈ ՀԱՅՈՑ ՀՈՎՎՈՒԹՅԱՆ